# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 20-Ա**

## ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 27-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը

1. Հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին:

2. Հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

3. ՄՈՎՍԵՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060517670, էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

**27 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 21-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 30-րդ և 31-րդ կետերի պահանջներով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի $14^{1}$ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագծում կատարված փոփոխությունները՝

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Մեսրոպ Ավետյանին սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 07-062-0202-0020 գյուղատնտեսական նշանակության վարելահողի 0.1306 հա -ից 0.03535 հա հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

2. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Վիրաբ Հովսեփյանին սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագրով 07-062-0032-0041 կադաստրային ծածկագրով 0.014հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման:

3. Հավանություն տալ Վերին Պտղնի համայնքի ղեկավարի առաջարկությանը և փոփոխել քաղաքացի Գոհար Իսրայելյանին սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր 07-062-0202-0027 գյուղատնտեսական նշանակության վարելահողի 0.0800 հա-ից 0.0075 հա և 0.0100 հա հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

3. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48,հեռ. 060 517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 22-Ա**

## ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2009 թվականի մայիսի 19-ի ՀՕ-137-Ն օրենքի 41-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1524-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող, /կադաստրային ծածկագիր 07-062-0105/-ից 1.3500 հա հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2.Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող, սակայն անճշտությամբ << անհայտ>> քաղաքացուն որպես սեփականություն փոխանցված /կադաստրային ծածկագիր 07-062-0023/-ից 0.0298 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

2.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

3.ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**